



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 105 - Ա

14 մայիսի 2018 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19 - Ի N 43 - Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի 1-ին պարբերության դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 19-ի «Ոլորտային մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբ ստեղծելու մասին»

N 43-Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Ստեղծել մարզպետարանի աշխատակազմի ոլորտային մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբ ըստ ոլորտների՝

- | | |
|--------------------------|--|
| Մուշեղյան Յուրա | - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ ֆինանսական |
| Զոհրաբյան Արմեն | - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ՝ քաղաքաշինություն |
| Համբարձումյան Համբարձում | - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ գյուղատնտեսություն և բնապահպանություն |
| Զազյան Կարեն | - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ կրթություն, մշակույթ և սպորտ |
| Պողոսյան Անուշ | - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ՝ առողջապահություն և սոցիալական ապահովություն |
| Հարությունյան Վանիկ | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ՝ տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում |

Մնացականյան Վարդուհի

- մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ՝ բոլոր ոլորտների ամփոփում և վերլուծություն

Շահբազյան Հասմիկ

- մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ՝ քաղաքացիական հասարակություն

Ղուրջուղյան Մարատ

- մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ՝ հողաշինարարություն

Խաչատրյան Գևորգ

- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ՝ ճանապարհաշինություն

Բիծյան Հակոբջան

- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ՝ ջրամատակարարում, ջրահեռացում և գազամատակարարում»:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝



ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ